*Երկրորդ ընթերցում*

*Կ-685-20.10.2023-ՊԱ-011*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԱՆՁՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ»**
**ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Հոդված 1.*** «Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի մասին» 2011 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-287-Ն օրենքի /այսուհետեւ՝ Օրենք/ 5-րդ հոդվածի 18-րդ մասում «քաղաքացու՝ կենսաչափական տվյալներ չպարունակող այլ անձնագիր» բառերից հետո լրացնել «՝ մինչեւ նոր կենսաչափական համակարգի ամբողջական ներդնումն ու գործարկումը» բառերը:

***Հոդված 2.*** Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերն ուժը կորցրած ճանաչել, իսկ 3.1-րդ մասում «2024 թվականի հունվարի 1-ը» բառերը փոխարինել «նոր կենսաչափական համակարգի ամբողջական ներդնումն ու գործարկումը» բառերով:

***Հոդված 3.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: